

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«-----» ----- 2014թ. N - Ն

**ԵՐԵՒԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԲՈՆՈՒԹՅԱՆ, ԵՐԵՒԱՅԻ ԱՆՏԵՍՄԱՆ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) Երեխայի հանդեպ բռնության և երեխայի անտեսման կանխարգելման հայեցակարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Երեխայի հանդեպ բռնության և երեխայի անտեսման կանխարգելման հայեցակարգից բխող միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

**ԵՐԵՒԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԵՐԵՒԱՅԻ ԱՆՏԵՍՄԱՆ,  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

**I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1. Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության և երեխայի անտեսման կանխարգելման հայեցակարգը /այսուհետ՝ հայեցակարգ/ մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման N 2 հավելվածի 8-րդ կետը և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համապատասխան դրույթները: Հայեցակարգը նպատակաուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ-ի կոնվենցիաների, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը:

2. Երեխայի հանդեպ բռնությունը համընդհանուր խնդիր է: Միջազգային նորմերով այն գնահատվում է որպես երեխաների հիմնական իրավունքների և ազատությունների խախտում: Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածը երաշխավորում է երեխաների պաշտպանությունը բռնություններից ու չարաշահումներից: Երեխայի պաշտպանության ապահովումը համարվում է պետության հիմնական պարտականություններից մեկը:

3. Կարևորելով բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իրավունքը և երեխայի հանդեպ բռնության և անտեսման երկույթի կանխարգելումը՝ հայեցակարգը սահմանում է երեխայի հանդեպ բռնության երկույթի կանխարգելմանը, վերացմանը և վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները և սկզբունքները: Պետության կողմից դեռևս սահմանված չեն բռնության երկույթի գնահատման չափանիշները, դրսևորման ձևերի, տարածվածության մասին տեղեկատվությունը, շահագրգիռ մարմինների համաձայնեցված արձագանքման և գործունեության մեխանիզմները: Բացակայում են բռնության ենթարկված երեխաների վերականգնողական ծառայությունները և երկույթի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ձևավորված չէ նաև հասարակության կողմից երկույթի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը:

4. Հասարակության մեջ բռնության երևույթի առկայության մասին են վկայում մասնակի հետազոտությունները, ինչպես նաև տարբեր ծառայություններից, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից ստացված տեղեկությունները:

## II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Հայեցակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) **Երեխայի հանդեպ բռնություն՝** երեխայի իրավունքները և ազատությունները սահմանափակելը, անվտանգությունը խախտելը և անձի արժանապատվությունը ոտնահարելը.

2) **Երեխայի հանդեպ սեռական բռնություն՝** երեխային սեռական գործողության մեջ ներգրավելը.

3) **Երեխայի հանդեպ ֆիզիկական բռնություն՝** երեխային ծեծելը, խոշտանգելը, մարմնական վնասվածք հասցնելը կամ մարմնական պատժի ենթարկելը.

4) **Երեխայի հանդեպ հոգեբանական բռնություն՝** երեխայի հանդեպ շարունակական հուզական և հոգեբանական դիտավորյալ ներգործություն՝ նրա զարգացման համար անհրաժեշտ կապվածությունից և հուզական կապերից զրկելը, որը կարող է խոչընդոտել երեխայի հոգեկան, մտավոր և վարքային զարգացմանը կամ խաթարել այն.

5) **Երեխայի անտեսում՝** երեխայի կենսապահովման համար հիմնական պահանջմունքներից դիտավորությամբ կամ անփութությամբ զրկելը, ինչի հետևանքով երեխան կարող է հայտնվել կյանքի և զարգացման համար վտանգավոր ու անպաշտպան իրավիճակում:

## III. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6. Երեխայի հանդեպ բռնություն կարող է տեղի ունենալ ինչպես ընտանիքում, այնպես էլ կրթական, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև փողոցում և հասարակական այլ վայրերում:

7. Միջազգային վիճակագրությունը փաստում է, որ յուրաքանչյուր 4-րդ ընտանիքում տեղի է ունենում բռնություն, որը կարող է ունենալ մի շարք պատճառներ՝ սթրեսային իրավիճակ ընտանիքում, ոչ բավարար եկամուտներ, բնակարանային վատ պայմաններ, աշխատանքի բացակայություն, սերունդների արժեքային համակարգերի բախումներ, ավլոհոլի չարաշահում, թմրանյութերի օգտագործում, երեխային ոչ բավարար ուշադրության և ժամանակի տրամադրում:

8. Բռնությունը ընտանիքի բոլոր անդամների վրա թողնում է բացասական ազդեցություն: Երևույթը հոգեբանների կողմից գնահատվում է ծայրահեղ բացասական, քանի որ ընտանիքի առավել խոցելի անդամների մոտ առաջացնում է մշտական վախի զգացում: Այն ընտանիքները, որոնց հարաբերությունների հիմքում բռնությունն է, համարվում են ոխակային: Բռնության երևույթի հանդեպ առավել խոցելի են սոցիալապես անապահով ընտանիքները, միայնակ մայրերի, միակողմանի ծնողազուրկ երեխաներ ունեցող և ծնողավարության ոչ բավարար հմտություններ ունեցող ընտանիքները: Բռնությունն ընտանիքում հաճախ հանգեցնում է ընտանիքի քայքայման, երեխաների դաստիարակության անտեսման, ինչի հետևանքով երեխաները հայտնվում են բարձիթողի վիճակում, որն էլ նպաստում է անչափահասների կողմից իրավախախտումների դրսևորմանը: Հիմնականում նման ընտանիքներում մեծացած երեխաներն իրենք են դառնում կամ բռնության զոհ, կամ բռնություն իրականացնող: Սոցիալապես անապահով ընտանիքներում, առավել հաճախ գյուղական բնակավայրերում, տարածված է երեխաների աշխատանքի շահագործումը, որը բացասական ազդեցություն է ունենում նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան զարգացման վրա: Հաճախ անտեսվում են երեխաների ֆիզիկական և հոգևոր կարիքները, որոնք կարող են դառնալ բռնությանը նպաստող հանգամանք: Այն կարող է դրսևորվել տարբեր ճանապարհներով. օրինակ՝ երեխայի ֆիզիկական անտեսումը ենթադրում է նրա սնունդի, հագուստի, հիգիենայի, առողջության նկատմամբ անտարբերություն, երեխաների լքում երկար ժամանակով և այլն: Կրթական անտեսումը ենթադրում է երեխաների հանրակրթությունից դուրս մնալ, մեծ թվով բացակայություններ: Այսօր մեր հասարակությունում առկա են երեխաների հանդեպ բռնության նոր դրսևորումներ՝ էրոտիկ, բռնության և սարսափի տարրեր պարունակող հեռուստատեսային հաղորդումներն ու ֆիլմերը, ինտերնետային հատուկ կայքերը, թերթերը և ամսագրերը:

9. ՀՀ պետական վիճակագրական տվյալների բացակայության պատճառով դժվար է ամբողջական պատկերացում կազմել հանրապետությունում երեխաների հանդեպ կիրառվող բռնության չափերի և ձևերի մասին: Սակայն, մի շարք կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունները փաստում են հանրապետությունում երևույթի առկայությունը և արձանագրում բռնությունների ընկալման գրեթե նույն՝ միջազգային մոդելը: Այսպես, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ 2006թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և ՀՀ ազգային վիճակագրության ծառայության կողմից իրականացված «Ընտանիք» ինստիտուտի հետազոտության արդյունքների համաձայն հայ իրականությունում կա բռնությունների որոշակի կայուն ընկալում, ըստ որի և ֆիզիկական, և հոգեբանական բռնություններն անընդունելի են համարվում ընտանիքի բոլոր անդամների նկատմամբ: Սակայն, գրանցվել են նաև որոշակի առանձնահատկություններ. օրինակ՝ հարցման մասնակիցների մի մասի կողմից հոգեբանական բռնությունները չեն կարևորվում այնպես, ինչպես ֆիզիկական

բնութիւնները: Պատահական չէ, որ երեխային անտեսելը, ծանր ֆիզիկական աշխատանքով ծանրաբեռնելը, ընտանիքին վերաբերող կարևոր հարցերում երեխայի կարծիքն անտեսելը, որպէս բնութիւն, դիտարկում է հարցմանը ենթարկված յուրանքանցուր հինգերորդը միայն: Համաձայն Երևանի երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնի տվյալների՝ 2006-2007թվականների ընթացքում կենտրոն տեղափոխված երեխաներից 60%-ը ընտանիքում ենթարկվել է անտեսման, 35%-ը՝ ֆիզիկական, 63%-ը՝ հոգեբանական բնութայն: Իսկ ներկա դրությամբ կենտրոն տեղափոխված երեխաներից 75%-ը ընտանիքում ենթարկվել է անտեսման, 53%-ը՝ ֆիզիկական, 8%-ը՝ սեռական, 61%-ը՝ հոգեբանական բնութայն: 2007-2008 թվականների ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում, մանկատներում և համայնքային ցերեկային 3 կենտրոնում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ այստեղ խնամվող շուրջ 1750 երեխայից 580-ը ընտանիքում ենթարկվել է բնութիւնների, այդ թվում՝ 36%-ը անտեսվել է, 30%-ը ենթարկվել է հոգեբանական, 29%-ը՝ ֆիզիկական և 1,7%-ը՝ սեռական բնութայն, իսկ 2014 թվականի տվյալների համաձայն վերը նշված հաստատություններում խնամվող շուրջ 1650 երեխաներից 470 երեխա ընտանիքում ենթարկվել է բնութայն, որից շուրջ 15.4%-ը՝ ֆիզիկական, 33%-ը՝ հոգեբանական, 1,5%-ը՝ սեռական բնութայն, 50%-ը՝ անտեսման: Ուշագրավ է այն փաստը, որ տարբեր հետազոտությունների արդյունքում հարցման մասնակիցները հոգեբանական ու ֆիզիկական բնութիւնների թվին դասվող շատ գործողություններ իրականում բնութիւն չեն համարում:

Նկատելի է այն փաստը, որ ընտանեկան բնութիւնները բացահայտելն ու տիպերը գնահատելը բավականին բարդ խնդիր է, քանի որ հարցման մասնակիցները գերադասում են կամ տեղեկատվություն չտրամադրել այդ մասին կամ պարզապէս բացառել ընտանիքում բնութիւնների առկայությունը:

10. Համաձայն ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված տվյալների՝ 2013 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցվել է անչափահասների բնութայն 245 դեպք՝ 114 աղջկա և 110-ը տղայի նկատմամբ: 2014թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցվել է անչափահասների բնութայն 46 դեպք՝ 27 աղջկա և 25 տղայի նկատմամբ:

11. Երեխային երդաշնակզարգացման համար, բացի ընտանիքից, կարևոր դեր ունի նաև

նրա սոցիալական միջավայրը: Հարկ է նշել նախադպրոցական հաստատությունների՝ հատկապէս դպրոցի դերը:

	2003	թվականի ՄԱԿ-
ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացված հետազոտությունների	արդյունքում	պարզ է դարձել,

որերեխաներին կատմամբ կիրառվող ֆիզիկական բռնության առավել բարձր տոկոս է գրանցվել դպրոցում:

Ընտանիքից դուրս՝ հանրակրթական, առավելապես, հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաներին կատմամբ կիրառվում են տարբեր տեսակի բռնություններ, որոնց մեջ գերակշռում են հոգեբանական և ֆիզիկական բռնության ձևերը: Այդ էփաստումն առ «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության «Դժվար հրավիճակում գտնվող երեխաներ» ծրագրի 2003թ. հաշվետվությունը, որտեղ արձանագրված է Երևանի N 1 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատության 4 դաստիարակների կողմից երեխաների հանդեպ կատարած բռնության դեպքը (դաստիարակներից մեկը ազատվել է աշխատանքից, 3-ը ստացել են նկատողություն): Հաստատությունում երեխաներին կատմամբ բռնության կիրառման մասին են վկայում նաև երեխաների այցերը հաստատության բուժկետ. նրանց 1/3-ը ունեցել է մարմնական վնասվածքներ:

12. ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ հաստատվել են երեխաների խնամքնապաշտպանությունից հանձնվող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, որոնց համաձայն վերոհիշյալ հաստատությունները սահմանված կարգով ապահովում են երեխայի պաշտպանությունը հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, սեռական շահագործումից և այլ սերուժից, դաժան վերաբերմունքից, անուշադրությունից ու անարդարությունից, առողջությանը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից: Սակայն, չափորոշիչների

կիրառման մեխանիզմների բացակայության պատճառով դեռևս կան չլուծված խնդիրներ: Ինչպես ընտանիքներում, այնպես էլ կրթական, խնամքնապաշտպանությունից հանձնվող հաստատություններում կիրառվում են երեխայի հանդեպ բռնության տարբեր ձևեր:

ՀՀ քրեական օրենսգրքը (Գլուխ 20) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքը (հոդված 178) նախատեսում են պատասխանատվության միջոցներ՝ երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների (իրավախախտումների) համար: Երեխայի հանդեպ բռնության դեպքերի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է նախատեսել առավել խիստ պատժամիջոցներ:

13. Վերջին տարիների դիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ առկա սոցիալտնտեսական պայմաններում աճել է անչափահասների խոցելիությունը տարբեր վտանգների՝ հատկապես շահագործման /թրաֆիքինգի/

ենթարկվելու վտանգին կատամար: Ըստ էության, սանորերևույթ է մեր իրականության մեջ, որը հայտնվել է հանրության ու շաղկերթի կենտրոնում: Իսկ 2009 թվականից պարբերաբար հավաքագրվող տեղեկատվությունը շահագործման ենթարկված անձանց մասին փաստեց, որ անչափահասները չմիայն խոցելի են, այլև հաճախ դառնում են շահագործման զոհին չպեսերկրի ներսում, այն պես էլ երկրից դուրս: 2009-2013 թվականներին թրաֆիքինգի ենթարկվել 14-ից մինչև 18 տարեկան 16 անչափահաս, այդ թվում՝ 5 տղա: Հատկանշական է, որ 16 անչափահասից միայն երկուսն է հաճախել միջնակարգ դպրոց, իսկ մյուսները՝ հատուկ դպրոցի սաներ են եղել կամ ունեցել են թերի միջնակարգ կրթություն: Ընդ որում, նրանք բոլորն էլ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ են եղել: Տղաները ներգրավվել են մուրաց կանության մեջ, այդ թվում՝ մեկը նաև մանկապարտեզի ղեկավար է: Աղջիկները հիմնականում ենթարկվել են սեռական շահագործման: Հաշվառնելով հանցատեսակի թաքնված լինելը, հարկ է նշել, որ վերոհիշյալ թիվը վերջնական է: Բացի այդ, եթե անցած տարիներին ընթացքում ու շաղկերթի կենտրոնում են եղել հիմնականում սեռական շահագործման դեպքերը, ապա վերջին երկու տարիների ընթացքում հաճախ են հանդիպում Հանրապետությունում երեխայի աշխատանքային շահագործման դեպքերը, ինչպես նաև երեխայի աշխատանքի վատ թարագույն ձևերը: Այս խնդիրը շարունակվում է զգուշացնելու համար անհրաժեշտ են հետազոտություններ, որոնց արդյունքը հիմք կձևառայի ոլորտի հետագա քաղաքականության մշակման համար:

14. Սույն խնդիրը հանդիսանում է 2014 թ. հունվար-հուլիսամիսներին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից իրականացված «Երեխայի հանդեպ բռնության վերաբերյալ» վերջին հետազոտությունն է, որին պատկանում է վերլուծել Հայաստանի Հանրապետությունում երեխաների նկատմամբ կիրառվող բռնության տարածվածության աստիճանը, տեսակները, դրանց պատճառներն ու հետևանքները: Հետազոտությունն իրականացվել է բոլոր մարզերում՝ պահպանելով գյուղ-քաղաքի ամասնությունը՝ առնվազն մեկ անչափահաս երեխա ունեցող 1215 ընտանիքներում: Հետազոտության մասնակիցների 44%-ը համարում է, որ մեր հասարակության մեջ երեխաներին կատամար բռնությունն այն խնդիրներից է, որը հրատապ լուծում է պահանջում: Հարցվածների 59%-ը համարում է, որ ընտանիքներում առավել տարածված է ֆիզիկական բռնությունը/կամ ֆիզիկական պատիժը, 43%-ը նշել է հոգեբանական բռնությունը, 30%-ը՝ անտեսումը, 4%-ը՝ սեռական բռնությունը և միայն 11%-ն է նշել, որ բռնության ճյուղի տեսակ էլ տարածված է: Հետազոտության մասնակիցները, որ պես երեխային կատամար բռնություն, նշել են՝ ծեծելը, տարբեր առարկաներով հարվածելը

(83%), մութսենյակում փակելը (73%), քաղցած թողնելը կամ չկերակրելը (71%), սպառնալը կամ ահաբեկելը (64%), երեխային անտեսելը (առանց ուշադրության և խնամքի թողնելը) և երեխային աշխատել ստիպելը (59%), ծնողներից մեկի հետ շփումն արգելելը (58%), երեխային ծաղրելը և/կամ վիրավորելը (56%), երեխային ապտակելը, հրմշտելը (43%), հարազատի կամ ընկերների հետ շփումն արգելելը (45%), երեխայի արտաքին տեսքը, պահվածքը, մտավոր ունակություններն անընդհատ քննադատելը (46%):

Հարցվածների 36%-ը փաստել է նաև, որ իրենց երեխաներն ընտանիքում երբեմն ենթարկվում են բռնության, հիմնականում՝ ֆիզիկական բռնության և/կամ ֆիզիկական պատժի (59%), հոգեբանական բռնության (58%), անտեսման (6%): Ի դեպ, 82 %-ը մոր կողմից, 50%-ը՝ հոր: Հարցման ենթարկվածներն, առաջին հերթին, որպես բռնության հիմնական պատճառներն շեշտել են՝ ընտանիքում վատ սովորույթների առկայությունը (հարբեցողություն, թմրամոլություն, խաղամոլություն՝ 84%), ընտանիքում ճգնաժամային իրավիճակի առկայությունը (ծնողների ամուսնալուծություն, մարդկային կորուստ, ընտանիքում մշտապես կոնֆլիկտային մթնոլորտի առկայություն՝ 50%), բռնություն կիրառող ի հոգեկան կամ մտավոր հիվանդությունների առկայությունը (48%):

Կարևորվել են նաև ՀԼՄ-ների կամ համացանցի միջոցով ներկայացվող՝ բռնության տեսարաններ պարունակող յուրաքանչյուրը՝ 16%: Վերոնշյալի հետ ազդուության համաձայն՝ երեխաների 27%-ը շրջապատի կողմից ենթարկվում է բռնության, այդ թվում 68%-ը՝ ֆիզիկական, 48%-ը՝ հոգեբանական: Երեխաներն ընտանիքից դուրս միջավայրում բռնության են ենթարկվում հիմնականում հասակակիցների (82%), ուսուցիչների (17%), դայակների ու դաստիարակների կողմից (15%):

«Երեխայի հանդեպ բռնության վերաբերյալ»

հետազոտության մասնակիցները, որպես բռնության երևույթի կանխարգելման արդյունավետ միջոցներ, նշել են շարունակական (մասնագիտական) աշխատանքը ընտանիքի հետ (60%), շարունակական (մասնագիտական) աշխատանք դարձնելը (45%), ինչպես նաև հասարակության մոտեցումների և հասարակական կարծրատիպերի փոփոխություն (27%), օրենսդրական փոփոխություններ (24%):

Վերոնշյալ ծրագրի շրջանակում ՀՀ մարզպետարանների (Երևան քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, ՏԻՄ-երի, ՀԿ-ների, առողջապահական հիմնարկների, կրթական և խնամքի հաստատությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվել են ֆոկուս խմբեր, անցկացվել են փորձագիտական հարցազրույցներ: Փորձագիտական հարցազրույցների և ֆոկուս խմբերի քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ երեխայի հանդեպ բռնության երևույթը հատկապես տարածված է երեխայի զարգացման



համար անբարենպաստ ընտանիքներում, և առավել իրատապ խնդիր է համարվում տվյալ երևույթի կանխարգելումը: Ֆոկուսմբի կողմից, որպես կանխարգելման միջոցառումներ, առաջարկվել է. ծնողներին հանրամատչելի գրականության տրամադրում, անբարենպաստ ընտանիքների անդամների, մասնավորապես ծնողների և երեխայի հետ աշխատող մասնագետների, այդ թվում՝ մանկավարժների, դաստիարակների, դայակների պարտադիր վերապատրաստում և մասնագիտական աշխատանք կազմակերպում:

15. 2010-2012 թվականներին իրականացվել է «Միավորվենք հանուն երեխաների, փրկենք ապագան» ծրագիրը, որին պատակներ աջակցել պետական կառավարման նախարարության կողմից, որի ներքին ու համայնքային կառույցներին՝ կանխարգելելու, հայտնաբերելու և համարժեք լուծում տալու հաստատություններում գտնվող երեխաների պաշտպանության խնդիրներին: Ծրագրի շրջանակներում ստեղծվել են երեխաների պաշտպանության թիմեր. ծրագրում ներգրավված համայնքներում կատարվել է երեխայի պաշտպանության իրավիճակի գնահատում: Մշակվել են «Երեխաների պաշտպանության ուղղորդման ընթացակարգը» և «Երեխայի պաշտպանությունը բռնությունից» ձեռնարկները:

16. Երեխաներին կատմամբ բռնության խնդիրը անհրաժեշտ է դիտարկել որպես համալիր սոցիալական խնդիր, և ըստ այդմ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ցմիայն դրա հետևանքների վերացման, այլ նաև կանխարգելման ուղղությամբ: ՀՀ մարզպետարանները (Երևանի քաղաքապետարանը)՝ իդեմս ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և համայնքներում խնամակալության և հոգաբարձության մարմինների, օրենքով լիազորված մարմիններ են, որոնք իրականացնում են երեխայի բռնության և անտեսման վերաբերյալ ուսումնասիրություններ և տրամադրում վերականգնողական ծառայություններ այն ընտանիքներին, որտեղ առկա է բռնությունը կամ դրավտանգը: Պետության կողմից երեխային կատմամբ իրականացվող քաղաքականության ուղղությունները ցերեխաներին մանկատներից, երեխաների խնամքի կաշտպանության գիշերօթիկ հաստատություններից ընտանիք ուղորդելը: Այդ նպատակով 2006 թվականից ՀՀ Լոռու մարզում իրականացվում է հաստատությունների բեռնաթափման ծրագիր, որը 2014 թվականից իրականացվում է նաև ՀՀ Շիրակի մարզում: Ծրագրին պատակներ հաստատության երեխաների խնամքի և դաստիարակության իրականացումն ապահովելն րանց կենսաբանական ընտանիքներում՝ ստեղծելով լիարժեք կյանքի կայուն երաշխիքներ: Մանկատներից երեխաների դուրս բերման խնդիր լուծման ընթացքում պատասխանատու է նաև խնամատար ընտանիքներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու

դաստիարակությունը

կազմակերպելը:

Վերոնշյալ ծրագրերն ուղղված են նաև երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելմանը: Ինդիվիդուալ խորման նպատակով իրականացվում են հին ստիտուցիոնալ բարեփոխումներ:

#### **IV. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՊԱՏԱԿԸ ԵՎ ԻՆԴԻՐՆԵՐԸ**

17.

Հայեցակարգի նպատակն է սահմանել երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացմանը, կանխարգելման ընթացքում բռնության ենթարկված երեխայի սոցիալիզացիայի և հոգեբանական վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

18. Հայեցակարգի խնդիրներն են.

1) մշակել բռնության ենթարկված երեխաների իրավական, կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության բնագավառում պետական գործունեության հիմնական ուղղությունները.

2)

մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացմանն ուղղված շահագրգիռ մարմինների համաձայնեցված գործունեության կառուցակարգեր (մեխանիզմներ).

3)

մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման կառուցակարգեր.

4)

մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի մասին հասարակության տեղեկացվածությունն ապահովող կառուցակարգեր:

#### **V. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

19. Հայեցակարգը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1)

պետության իրազեկվածությունը կապտասխանատվությունը երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելման և վերացման գործընթացում.

2)

բռնության ենթարկված երեխային և նրա ընտանիքին սոցիալական ծառայություններ իտրամադրման մատչելիության և հասցեականության ապահովումը.

3)

բռնության ենթարկված երեխային և նրա ընտանիքին մատուցվող ծառայությունների ապակենտրոնացումը.

4)

պետական մարմինների և հասարակության համագործակցությունը երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելման և վերացման գործում.

5)

երեխայի պաշտպանության հարցում բոլոր շահագրգիռ կողմերի միասնական մոտեցում և փոխհամագործակցության ապահովում:

## VI .

### **ԵՐԵՒԱՅԻ Հ Ա Ն Դ Ե Կ Բ ՈՒ Յ Թ Ի Կ Ա Ն Խ Ա Ր Գ Ե Լ Մ Ա Ն ՈՒ Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ղ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը**

20.

Երեխայի հանդեպ բռնության և անտեսման կանխարգելման ու վերացման հիմնական ուղղություններն են.

1)

երեխայի կյանքի անվտանգությանը, նրա ազատության և արժանապատվության պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտի կատարելագործումը.

2)

երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող տեղեկատվության հավաքագրման կառուցակարգերի ստեղծումը.

3)

ընտանիքում երեխայի բռնության և անտեսման երևույթի կանխարգելմանը, բռնության ենթարկված երեխայի սոցիալական վերականգնմանն ուղղված սոցիալական աջակցության համակարգի ներդրումը.

4)

երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելմանը և վերացմանն ուղղված կրթական ծրագրերի ներդրումը.

5)

երեխայի հանդեպ բռնությունը կանխարգելող կրթության ենթարկված երեխայի վերականգնումն իրականացնող մարմինների միջև համագործակցության կառուցակարգերի ստեղծումը.

6)

երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելմանը և վերացմանը, բռնության ենթարկված երեխաների վերականգնմանն ուղղված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցության ապահովումը.

7)

զանգվածային լրատվության բերելիս այի հանդեպ բռնություններ կույթին կատմամբ հասարակության կողմից հանդուրժողական վերաբերմունքի ձևավորումը:

## **VII . ԱԿՆԿԱԼՎՈՂԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

21. Հայեցակարգի ակնկալվող արդյունքներն են.

1)

երեխայի հանդեպ բռնություններ կույթի և անտեսման վերաբերյալ բարեփոխված օրենսդրություն.

2)

շահագրգիռ գերատեսչությունների սահմանված գործառույթներ և համագործակցության մեխանիզմներ.

3)

երեխայի հանդեպ բռնություններ կույթն արտացոլող պետական վիճակագրության և տեղեկատվության հավաքագրման կառուցակարգեր.

4)

երեխայի հանդեպ բռնություններ կույթին կատմամբ հասարակական գիտակցության փոփոխություն:

**ԾՐԱԳԻՐ**

**ԵՐԵՒԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԵՐԵՒԱՅԻ ԱՆՏԵՍՄԱՆ,  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԻՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

N	Միջոցառումները	Ակնկալվող արդյունքը	Ժամկետը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1.	Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված միջազգային փաստաթղթերի ուսումնասիրում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը միջազգային նորմերին համապատասխանեցնելու նպատակով	Կուսումնասիրվեն Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված միջազգային փաստաթղթերը	2015թ. առաջին եռամսյակ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

					Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
2.	Բռնության ենթարկված երեխայի պաշտպանությանն ուղղված ուղղորդման մեխանիզմի (ընթացակարգ) մշակում	Բռնության ենթարկված երեխայի պաշտպանությու նն ապահովող ուղղորդման մեխանիզմի կարգը	2015թ. երկրորդ եռամյակ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
3.	Երեխաների խնամք և պաշտպանություն	Երեխաների հանդեպ կամ	2015-2016թթ.	Հայաստանի Հանրապետության	Հայաստանի Հանրապետության	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	իրականացնող հաստատություններում երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգերի և հաստատված դեպքերի գրանցման մատյանների մշակում, հաստատում և ներդրում	նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգերի և հաստատված դեպքերի գրանցման մատյանների ներդրում		աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
4.	Խնդրի լուծման ուղղությամբ այլ երկրների հաջողված փորձի ուսումնասիրում	Կճևավորվի առաջարկ հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող տեղեկատվության հավաքագրման կառուցակարգի	2015թ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն,	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ, միջազգային կազմակերպություններ

		ներդրման վերաբերյալ			Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
5.	Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտմանն ու դրանց պատճառների պարզաբանմանն ուղղված հետազոտությունների իրականացում	Կիրականացվի Հայաստանի Հանրապետությունում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտմանն ու դրանց պատճառների պարզաբանման վերաբերյալ վերլուծությունը	2015-2016թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
6.	Երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող ցուցանիշների համակարգի մշակում՝ վիճակագրական հաշվետվություններում ներդնելու նպատակով	Կմշակվի և վիճակագրական հաշվետվություններում կներդրվի երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող ցուցանիշների համակարգը	2015թ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ



					Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
7.	Երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող տեղեկատվության հավաքագրման համակարգի ստեղծում	Կստեղծվի երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող տեղեկատվության հավաքագրման համակարգը	2016թ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
8.	Հանրապետության քաղաքների և մարզերի համապատասխան հաստատություններում (պոլիկլինիկա, ոստիկանություն, սոցիալական ծառայությունների տարածքային մարմիններ)	Կստեղծվի բռնությունների ահազանգման և կանխարգելման մասնագիտական ծառայություններ հանրապետության քաղաքների և մարզերի համապատասխ	2015-2017թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	բռնությունների ահազանգման և կանխարգելման մասնագիտական ծառայությունների (թեժ գծերով) ստեղծում	ան հաստատություն ներում			ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության մարզերում՝ մարզպետարաններ ը և Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարան ը (համաձայնությամբ )	
9.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար սոցիալ- հոգեբանական աջակցություն տրամադրող մասնագիտացված ծառայությունների ստեղծում	Կստեղծվեն դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար սոցիալ- հոգեբանական աջակցություն տրամադրող մասնագիտացվա ծ ծառայություններ	2016-2018թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
10.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական վերականգնմանն ուղղված կենտրոնների՝ ժամանակավոր կացարանների,	Կստեղծվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մայրերի և/կամ երեխաների սոցիալական վերականգնման	2016-2018թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	ապաստարանների ստեղծում	ն ուղղված կենտրոններ՝ ժամանակավոր կացարաններ, ապաստարաններ				
11.	Համապատասխան կառույցների և ծառայությունների հետ համատեղ երեխայի բռնության և անտեսման կանխարգելմանն ուղղված կրթական ծրագրերի մշակում և իրականացում	Կհաստատվեն և կներդրվեն երեխայի բռնության և անտեսման կանխարգելմանն ուղղված կրթական ծրագիր	2015-2018թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
12.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված	Կմշակվեն կյանքի դժվարին իրավիճակում	2016թ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և	Հայաստանի Հանրապետության կրթության և	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	<p>երեխաներին ծառայություններ տրամադրող մասնագետների (սոցիալական աշխատողներ, բժիշկներ, ոստիկաններ, մանկավարժներ և այլ մասնագետներ) համար ուսումնամեթոդական նյութերի մշակում</p>	<p>հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրող մասնագետների (սոցիալական աշխատողներ, բժիշկներ, ոստիկաններ, մանկավարժներ և այլ մասնագետներ) համար ուսումնամեթոդական նյութեր</p>		<p>սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն</p>	
13.	<p>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրող մասնագետների (սոցիալական աշխատողներ, բժիշներ, ոստիկաններ և այլ մասնագետներ) վերապատրաստման դասընթացների</p>	<p>Կվերապատրաստվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրող մասնագետները</p>	2015 -2018թթ.	<p>Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի</p>	<p>Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

	կազմակերպում				Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
14.	Ուսումնական հաստատություններում, համայնքային տարբեր կառույցներում, մանկական հաստատություններում հոգեբանական խորհրդատվության տրամադրման ապահովում	Կապահովվի հոգեբանական խորհրդատվության տրամադրումը ուսումնական հաստատություններում, համայնքային տարբեր կառույցներում, մանկական հաստատություններում	2015-2018թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
15.	Հանրային իրազեկման	Կիրատարկվեն	2015-2018թթ.	Հայաստանի	Հայաստանի	Օրենքով չարգելված

	նյութերի մշակում և հրատարակում	երեխայի հանդեպ բռնության երևույթի նկատմամբ հասարակության կողմից անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանն ուղղված հանրային իրազեկման նյութեր,		Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	այլ աղբյուրներ
16	Սեմինարների, կլոր-սեղանների, գիտաժողովների և կոնֆերանսների կազմակերպում շահագրգիռ կառույցների և ՀԿ-ների մասնակցությամբ	Կազմակերպվեն երեխայի հանդեպ բռնության երևույթի նկատմամբ հասարակության կողմից անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանն ուղղված սեմինարներ, կլոր-սեղաններ, գիտաժողովներ	2015-2018թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		և կոնֆերանսներ			Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	
17.	Ռադիո և հեռուստահաղորդումների կազմակերպում	Կհեռարձակվի երևույթի նկատմամբ հասարակության կողմից անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանն ուղղված հեռուստառադիո հաղորդումների շարք	2015-2018թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
18.	Համայնքներում հանրային իրազեկման աշխատանքների իրականացում	Կհեռարձակվի երևույթի նկատմամբ հասարակության կողմից	2015-2018թթ.	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		<p>անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանն ուղղված հեռուստառադիո հաղորդումների շարք  Կիրականացվեն երեխայի հանդեպ բռնության երևույթի նկատմամբ հասարակության կողմից անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանն ուղղված հանրային իրազեկման աշխատանքներ համայնքներում:</p>		<p>նախարարություն</p>	<p>Հանրապետության ոստիկանություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն</p>	
--	--	---	--	-----------------------	---	--



## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### ԵՐԵՒԱՅԻՀ ԱՆԴԵՊՐՈՆՈՒԹՅԱՆ, ԵՐԵՒԱՅԻ ԱՆՏԵՍՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՑԲԽՈՂՄԻ ՋՈՑԱՌՈՒՄՆԵ ՐԻՑԱՆԿ ԸՀԱՍՏԱՏԵԼՈՒՄ ԱՍԻՆ

1.	<p><b><u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</u></b></p>
	<p>Նախագիծը մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման N 2 հավելվածի 8-րդ կետի: Նախագծի ընդունումը պայմանավորված է սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով: Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության և երեխայի անտեսման կանխարգելման պետական հայեցակարգը /այսուհետ՝ հայեցակարգ/ հիմնված է «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 9-ի համապատասխան դրույթների վրա և նպատակաուղղված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի և «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ-ի կոնվենցիաների, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը:</p> <p>Երեխայի հանդեպ բռնությունը համընդհանուր խնդիր է: Միջազգային նորմերով այն գնահատվում է որպես երեխաների հիմնական իրավունքների և ազատությունների խախտում: Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածը երաշխավորում է երեխաների պաշտպանությունը բռնություններից ու չարաշահումներից: Երեխայի պաշտպանության ապահովումը համարվում է պետության հիմնական պարտականություններից մեկը:</p>
2.	<p><b><u>2. Առաջարկվող կարգավորման բնույթը</u></b></p>
	<p>Սույն ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումների, բնակչության սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրերին համահունչ: Կարևորելով բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իրավունքը, ինչպես նաև երեխայի հանդեպ բռնության և անտեսման երևույթի կանխարգելման կարևորությունը՝ հայեցակարգի նպատակն է սահմանել երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացման, կանխարգելմանը և վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները և</p>

	<p>սկզբունքները:</p> <p>Պետության կողմից դեռևս սահմանված չեն բռնության երևույթի գնահատման չափանիշները, դրսևորման ձևերի, տարածվածության մասին տեղեկատվությունը, շահագրգիռ մարմինների համաձայնեցված արձագանքման և գործունեության մեխանիզմները: Բացակայում են բռնության ենթարկված երեխաների վերականգնողական ծառայությունները և երևույթի կանխարգելմանն ուղղված միջոցառումները: Հանրապետությունում ձևավորված չէ նաև հասարակության կողմից երևույթի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը:</p>
3.	<p><b><u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</u></b></p>
	<p>Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի մասնագետների կողմից:</p>
4.	<p><b><u>Ակնկալվող արդյունքը.</u></b></p> <ol style="list-style-type: none"> <li>1) երեխաների հանդեպ բռնության երևույթի և անտեսման վերաբերյալ բարեփոխված օրենսդրություն,</li> <li>2) շահագրգիռ գերատեսչությունների սահմանված գործառույթներ և համագործակցության մեխանիզմների առկայություն,</li> <li>3) երեխաների հանդեպ բռնության երևույթն արտացոլող պետական վիճակագրություն և տեղեկատվության հավաքագրման ներդրված կառուցակարգեր,</li> <li>4) երեխաների հանդեպ բռնության երևույթի նկատմամբ հասարակության գիտակցության փոփոխություն:</li> </ol>

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵԽԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԵՐԵԽԱՅԻԱՆ ՏԵՍՄԱՆ,  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՑՔԻ ՈՂՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵ  
ՐԻՑԱՆԿ ԸՆԴՀԱՆՍՏԱՏԵԼՈՒՄ ԱՍԻՆ»**

**ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄ ԲՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ԿԱ  
Մ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ Ե  
ՎԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության «Երեխայի հանդեպ բռնության,  
երեխայի անտեսման,  
կանխարգելման հայեցակարգը և հայեցակարգի ցրված դիջոցառումների ցանկը հաստատելու մասին» որոշման նախագիծն  
ընդունելու հետևանքով պետական բյուջեում ծախսերի ավելացումներ չեն նախատեսվում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՒԱՅԻՎԱՆԴԵՊՐՈՒՆՈՒԹՅԱՆ, ԵՐԵՒԱՅԻԱՆՏԵՍՄԱՆ,  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՑՔԻ ՈՂՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵ  
ՐԻՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՄ ԱՍԻՆ»**

**ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄ ԲԸՆԴՈՒՆ ՎԵԼԻՔԱՅԼԻՐԱՎ  
ԱԿԱՆԱԿՏԵՐԻ ԿԱՄԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅ  
ԱՆՄԱՍԻՆ**

1.	<b>Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը</b>
	Սույն որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում կամ դրանց ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:
2.	<b>Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը</b>
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով պարտավորություններ չեն ստանձնվել:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՒԱՅԻ ՀԱՆԴԵՊ ԲՈՒՈՒԹՅԱՆ, ԵՐԵՒԱՅԻ ԱՆՏԵՍՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԻՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 .	<b>Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը</b>
	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության «Երեխայի հանդեպ բռնության, երեխայի անտեսման, կանխարգելման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» որոշման նախագիծը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <a href="http://www.mlsa.am">www.mlsa.am</a> ինտերնետային կայքում՝ 2014 թվականի հունիսի 27-ին:</p>

**ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ԵՐԵՒԱՅԻՎԱՆԴԵՊՐՈՒՆՈՒԹՅԱՆ, ԵՐԵՒԱՅԻԱՆՏԵՍՄԱՆ,  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՑԲԵԽՈՂՄԻՋՈՑԱՌՈՒ  
ՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՄ ԱՍԻՆ»  
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՇԱՀԱԳՐԳԻՌՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԱՌԱՐ  
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առարկության առաջարկության հեղինակը (առարկության, առաջարկության ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
<p>Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն</p> <p>10.07.2014թ. թիվ 01/10/7910-14</p>	<p>Նախագծի 2-րդ հավելվածի բոլոր միջոցառումներում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը իտարկելու պես համակատարող:</p> <p>2. Նախագծի 2-րդ հավելվածի 1-ին միջոցառման «համակատարողներ» սյունակում «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բառերի ցիտոլրացնել «ՀՀ արդարադատության նախարարություն» բառերը:</p> <p>3. Նախագծի 2-րդ հավելվածի 4-րդ 5-րդ 7-րդ և 10-</p>	<p>Ընդունվել, խմբագրվել է:</p> <p>Ընդունվել, խմբագրվել է:</p>

	<p>րդ, 15-րդ, 16-րդ 18-րդ միջոցառումներում «համակատարողներ» սյունակում լրացնել «Հոստիկանություն» բառերը:</p> <p>4. Նախագծի 2-րդ հավելվածի 15-րդ միջոցառման «համակատարողներ» սյունակում «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ մշակույթի նախարարություն» բառերով:</p> <p>5. Նախագծի 2-րդ հավելվածի 18-րդ կետի «համակատարողներ» սյունակում «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ տարածքային կառավարման նախարարություն» բառերով:</p> <p>6. Նախագծի 2-րդ հավելվածի 12-րդ և 14-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝</p> <p>«12. Միջոցառումը՝ «Համապատասխան կառույցների և ծառայությունների հետ համատեղ երեխայի բռնության և անտեսման կան</p>	<p>Ընդունվել է մասամբ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը համակատարողների սյունակից չի հանվել, քանի որ միջոցառումը վերաբերում է ոլորտի բոլոր պատասխանատուներին:</p> <p>Ընդունվել է:</p>
--	---	---

	<p>խարգելմաննուղղվածկրթականծրագրերիմշակում, ներդրումևիրականացում»,</p> <p>Ակնկալվողարդյունքը՝ «Կհաստատվենևկներդրվեներեխայիրոնությանևանտեսմանկանխարգելմաննուղղվածկրթականծրագրեր»,</p> <p>Ժամկետը՝ «2015-2018 թվականներ»,</p> <p>Պատասխանատուկատարողը՝ «ՀՀաշխատանքիևսոցիալականհարցերինախարարություն»,</p> <p>Համակատարողը՝ «ՀՀկրթությանև գիտությաննախարարություն, ՀՀտարածքայինկառավարմաննախարարություն, »,</p> <p>Ֆինանսավորմանաղբյուրը՝ «ՀՀպետականբյուջե, օրենքովչարգելվածայլաղբյուրներ, միջազգայինկազմակերպություններ»</p> <p>»:</p> <p>7. Նախագծի 2-րդհավելվածըլրացնելնորմիջոցառումով, հետևյալբովանդակությամբ.</p> <p>«Միջոցառումը՝</p>	
--	--	--



	<p>«Երեխաների ինամքնապաշտպանություն» իրականացնող հաստատություններում երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգերի և հաստատված դեպքերի գրանցման մատյանների ձևերի մշակում, հաստատում և ներդնում»,</p> <p>Ակնկալվող արդյունքը՝ «Երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգերի և հաստատված դեպքերի գրանցման մատյանների ներդրում»,</p> <p>Ժամկետը՝ «2015- 2016 թվականներ»</p> <p>Պատասխանատու կատարողը՝ «ՀՀ աշխատանքիև սոցիալական հարցերի նախարարություն»,</p> <p>Համակատարողը՝ «ՀՀ ոստիկանություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն»,</p> <p>Ֆինանսավորման աղբյուրը՝</p>	<p>Ընդունվել է:</p>
--	--	---------------------

	<p>«օրենքով չարգելված այլադրյուններ , միջազգային կազմակերպություններ»):</p>	
<p>Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն</p> <p>04.07.20014թ թիվ ԱՄ/11.1/6873-14 գրության</p>	<p>Նախագծի 14-րդ կետով սահմանված է «խնամատար ընտանիք» ինստիտուտի կարևորության մասին, որն ուղղակիորեն պարտադրում է համապատասխան ոլորտի վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների իրականացում, քանի որ թե՛ ՀՀ ընտանեկան օրենսգրքով, և թե՛ խնամատար ընտանիքին վերաբերող իրավական այլ ակտերով առկա են մի շարք օրենսդրական բացեր, որոնք վերհանման և լուծման կարիք ունեն (օրինակ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվելն մի շարք դրույթներ՝ նվիրված խնամատար ծնողներին տրամադրվող արտոնություններին, խնամատար ընտանիքում խնամվող երեխաների թույլատրելի թվաքանակին, հոգեզավակի և խնամատար ծնողների միջև</p>	<p>Ընդունվել է:</p>

	<p>տարիքային տարբերությանը և այլն):</p> <p>2. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պոլիկլինիկաները Երևան քաղաքում գտնվում են քաղաքապետարանի ենթակայության տակ, մարզերում՝ մարզպետարանների, իսկ մարզային քաղաքներում պոլիկլինիկաներ բացակայում են, անհրաժեշտություն է առաջանում Նախագծի 2-րդ հավելվածով հաստատված ծրագրի 7-րդ կետը վերախմբագրել՝ որպես համակատարողներ սահմանելով նաև մարզերում՝ մարզպետարանները և Երևան քաղաքում՝ (համաձայնությամբ) քաղաքապետարանը:</p>	<p>Ընդունվել է:</p>
--	--	---------------------